ՀԱՅԿԱԿԱՆ ԵՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 4, 1963 Общественные науки

Ա. Սահակյան

ՄԻ ԷՋ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒՂՈՒՑ

(Զինվորի օրագրից)

1920 թ. դեկտեմբերի 2-ին կազմակերպվեց Հայկական կարմիր բանակը։

1920 թ. դեկտեմբերի 2-րդ կեսին հրամանատար Վարանովիչին հանձնարարվեց Սարդարարադի (այժմ Հոկտեմբերյան), 6-րդ գնդից կամավորական սկզբունքով կազմակերպել հատուկ ջոկատ, որի առաջ Հ. Կ. Պ և կառավարության որոշմամբ խնդիր էր դրվում օգնել լոռվա ապստամբներին և օժանդակել Վրաստանի բանվորների պայքարին։

Պարտիզանական հատուկ ջոկատի հրամանատար նշանակվեց ընկ. Վարանովիչը, կոմիսար՝ ընկ. Ռ. Ռևորգյանը, ջոկատի հրամանատարի տեղակալ՝ ընկ. Ա. Հովակիմյանը, գումարտակի հրամանատար՝ Անդրաբատովը, վաշտի հրամանատարներ՝ Ա. Ազատյանը, Տհմուսը և Մ. Մխչյանը, քաղղեկներ՝ Հ. Սուքիասյանը, Մ. Փափազյանը, Ռ. Միտոյանը, Հ. Սարգսյանը, բուժակ՝ Ռ. Քոթոյանը և այլ ընկերներ։ Հատուկ ջոկատը դեկտեմբերի վերջին տեղափոխվեց Քանաքեռ, իսկ 1921 թ. փետրվարի առաջին կեսին, եկավ Երևան։ Կանգ առավ Աստաֆյան (ներկայումս Աբովյան) փողոցի № 16 շենքի առաջ, որտեղ տեղավորված էր ՀԿ(բ) պարտիայի Կենտրոնական Կոմիտեն (այժմ ՀԿՊ Երքաղկոմի Շահումյանի անվան Քաղլուս տուն)։

Պատշգամբում երևացին բրիգադի կոմիսար Լ. Մխչյանը, հատուկ ջոկատի հրամանատար Վարանովիչը և ուրիշ ընկերներ։ Կայացավ միտինգ, որտեղ ելույթ ունեցան Լ. Մխչյանը և Վարանովիչը։ Այնուհետև ջոկատը վերադարձավ Քանաքեռ։

Հաղթահարելով դժվարությունները, ջոկատին հաջողվեց, 1921 թ. փետրվարի 9-ին հասնել Ղազախ։ Նրան դիմավորեցին տեղի աշխատավորությունը և 20-րդ գիվիզիայի կազմը, որի հրամանատարն էր Մ. Վելիկանովը։

Ղազախում փետրվարի 11-ին, ջոկատը շարժվեց դեպի Կողբ (Նոյեմբերյան) և Շնող գյուղերը։ Հարձակման շերտն էր Այրում կայարանի հյուսիս-արևելյան լեռան լանջերը։

Ամբողջ գիշեր ջոկատը առաջ էր շարժվում։ Հետախուզության պետ ընկ. Ավդալյանը հայտնեց, որ գետի վրա կա երկու գերանից մի կամուրջ, որի վրայով կարող է անցնել միայն հետևակը, այն էլ զրահապատ գնացքը կրակի տակ է պահում։ Հետախուզությունը սարից սկսեց քարեր գլորել երկաթգծի վրա, որից հետո զրահապատ գնացքը ստիպված եղավ նահանջել։ Հրաման եղավ արագ անցնել կամուրջը և հարձակման դիրք գրավել։ Սկսվեց հրացանների և գնդացիրների կրակոցների համատարած ճարճատյուն։ Մարտը կար-

---

1 *Հետագայում այդ հատուկ ջոկատը համալրվեց Լոռվա պարտիզանական ջոկատով և վերանվանվեց 4-րդ հայկական Լոռվա գունդ։*

ճատև եղավ։ Մեր գնդացրային կրակը և մարտիկների հարձակումը ստիպեց հակառակորդին ետ նահանջել մոտ երկու և կես կիլոմետր, թողնելով սպանվածներ, վիրավորներ։ Առաջ շարժվեցինք Սադախլո գյուղի ուղղությամբ։ Ջոկատի աջ թևից հարձակվում էին 20-րդ դիվիզիայի զորամասերը, ձախից՝ Լոռվա պարտիզանական ջոկատը։

Ջոկատը առաջ շարժվեց և նոր դիրքեր գրավեց։ Ղարադաղ լեռան բլուրները անցնում էին ձեռքից ձեռք։ Մեր ջոկատի դեմ կռվում էին մենշևիկների 6-րդ գունդը և մենշևիկյան «Գվարդիական» զորամասերն ու զրահապատ դնացքը։ Հակառակորդը օդտվելով մթությունից՝ նահանջեց դեպի Սադախլո և ուղղություն վերցրեց դեպի Շուլավեր։

Փետրվարի 13-ին ջոկատը հարձակման անցավ Սադախլո և Շուլավեր գյուղերի ուղղությամբ։ Նույն օրը 2-րդ վաշտի հրամանատար Ա. Ազատյասի ղեկավարությամբ՝ գրոհով ազատագրվեց Սադախլո գյուղը և երկաթգծի կայարանը։

Այդ հաղթանակի մասին «Կոմունիստ» թերթի 1921 թ. փետրվարի 17-ի N 58-ում գրված է. «լայնացնելով իր հաղթական հարձակումը, Լոռու գյուղացիները, հեղափոխական զորախումբը կռվով վերցրեց Սադախլոն։ Մեր զորամասերը առաջանում են դեպի Շուլավեր։ Այժմ մեր գրաված շրջանի վրացական օկուպացիոն բանակը ամբողջապես ջախջախված է։ Մեր կողմն անցան ավելի քան 3000 հոգի։ Գերիները շատ են, նույնքան էլ ցրվել են դաշտերը և լեռները»[2]։

Փետրվարի 14-ին ջոկատը գրավեց Քաթրդ-գաղի լեռնաշղթան։ Մարտական կարգով առաջ շարժվեց։ Շուլավեր (այժմ Շահումյան) գյուղի հարավարևմտյան կողմի բարձունքից դիմադրություն ցույց տվեց հակառակորդի հեծյալ վերջապահ ոռրամասը։ Մի ժամ անց սարը գրավվեց և ջոկատը առաջ շարժվեց։

Փետրվարի 15-ին ջոկատն արդեն Շուլավերում էր։ Տեղի աշխատավորությունը վերջինիս դիմավորեց ջերմ խանդավառությամբ և հյուրասիրեց։ Հանդրստանալուց հետո ջոկատը ստացավ նոր խնդիր՝ գրավել Թիֆլիսից-Երևան գնացող երկաթգծի Խրամ գետի վրայի կամուրջը։

Փետրվարի 16-ի լուսաբացին կամուրջը գրավվեց։ Պարզվեց, որ հակառակորդը գետի ձախ ափում թողել է դաշտային պահակ և հետևից նահանջել, նրանք էլ լուսաբացին փախուստի դիմեցին։ Լոռվա «չեզոք գոտին» ազատագրվեց 1921 թ. փետրվարի առաջին կեսին, բայց դրանով բանակի առաջ շարժումը չդադարեց։ Զորամասերը նոր հրաման ստացան,—վճռական հարձակման անցնել դեպի Թիֆլիս։

Փետրվարի 16-ին ջոկատը Խրամ գետի աջ ափին էր, աղրբեջանական Ամիր և Կուլար գյուղերը ջոկատին ճաշկերույթ տվեցին։ Ճաշկերույթից հետո ջոկատը շարժվեց դեպի Կոդի գյուղը և Կումիս լճի հյուսիս-արևելյան բարձունքները, որտեղ և պատրաստվեց հարձակման։

Փետրվարի 17-ին Կոդի գյուղի բարձունքում հայտնի դարձավ, որ Շուլավերում (այժմ Շահումյան) կազմակերպվել է ռևոլյուցիոն կոմիտե, որի անդամներն էին Ս. Գեգեչկորին, Ֆ. Մախարաձեն, Հ. Նազարեթյանը, Օրախելաշվիլին և Վրաստանի այլ կոմունիստներ։ Կոմիտեն ղեկավարելու էր Վրաստանի

2 «Կոմունիստ», 1921, փետրվարի 17, № 58։

զինված ապստամբությունը։ Վրաստանում ավելի է ուժեղանում բանվորագյուղացիական մասսաների ապստամբությունը, այն տարածվում է մի շարք գավառներում և համաժողովրդական բնույթ կրում։

«Փետրվարի սկզբին մեծ ապստամբություն պոռթկաց, որը զարմանալի արագությամբ տարածվեց և ընդգրկեց ոչ միայն վրացական բնակչությանը, այլև հայ բնակչությանը»[3]։

Ռևկոմի առաջին քայլն այն եղավ, որ կոչով դիմեց աշխատավորությանը և բանակին՝ մենշևիկների կառավարության տապալման և սովետական իշխանություն հաստատելու մասին։

Փետրվարի 19-ին, լուսաբացին, ջոկատը մարտական կարգով առաջ շարժվեց։ Սկսվեց անհավասար մարտը։ Առաջին գծում հակառակորդը կենտրոնացրել էր յունկերների բանդիտական զորամասերը։ Հակառակորդը փորձեց կասեցնել գրոհը, բայց արդեն ուշ էր։ Ստիպված էր նահանջել, մարտի դաշտում թողնելով սպանվածներ, վիրավորներ և զինամթերք։

Նույն օրը ջոկատի ձախ թևը գրավեց Տարախելա գյուղի հարավ-արևմտյան բարձունքը, իսկ աջ թևը՝ ֆունիկուլյորից մոտ վեց կիլոմետր դեպի հարավ-արևմուտք էր գտնվում։

Փետրվարի 23-ին ընդհանուր հարձակման հրաման եղավ, գործել սկսեցին թնդանոթները, հրահանգ եղավ շարժվել առաջ դեպի Կոչոռ։ Թնդանոթային և գնդացրային կրակի տակ ջոկատն առաջ շարժվեց։ Թիֆլիսի համար մղվող մարտը վճռում էր մենշևիկների բախտը։

Նույն օրը լուսաբացին ազատագրվեցին Տարախմելա գյուղը, իսկ երեկոյան մարտ էր գնում Կոչոռ գյուղի և նրա հյուսիսային բարձունքի համար։ Մենշևիկները մարտի մեջ մտցրին նոր թարմ յունկերական և «ավարդիական» զորամասեր։ Մարտն անհավասար էր, չնայած դրան, փետրվարի 24-ին, լուսաբացին՝ ջոկատն արագ և վճռական գրոհի նետվեց, ազատագրեց Կոչոռ գյուղը և գրավեց նրա հյուսիսային կողմի անտառապատ բարձունքները և գերեց մի դասակ՝ մենշևիկյան բանակի 5-րդ գնդի զինվորներ և սպաներ։

Վրաստանի կոմունիստական պարտիայի կատարած ակտիվ ագիտացիոն աշխատանքի շնորհիվ մենշևիկյան զորամասերի շարքային զինվորների մեծ մասը չէր ուզում կռվել ռուս, հայ և այլ ազգության բանվորների և գյուղացիների դեմ։ Սակայն Այրում կայարանի հյուսիս-արևելքում և հարավ-արևմուտքում (Լոռու սարահարթ), որտեղ պատսպարված էին «գվարդիան» և յունկերները, ուժեղ դիմադրություն էր ցույց տրվել։

1921 թ. փետրվարի 25-ին, երեկոյան ջոկատն իր ամբողջ կազմով Մանգլիսի խճուղով, Սոլոլակի կենտրոնական փողոցով մտավ Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիս։ Այդ փողոցի սկզբից մինչև Միխայլովսկայա (այժմ Պլեխանովի) փողոցը, որտեղ այն ժամանակ գտնվում էր մենշևիկյան յունկերների դպրոցը, ամբողջ ճանապարհի երկու կողմերը քաղաքի բանվորները և աշխատավորությունը կանգնած, ողջունում էին կարմիր բանակայիններին։ Ուռաների որոտի տակ ջոկատը հաղթական քայլերով գնաց իրեն հատկացված տեղը։

Թիֆլիսի մյուս ծայրամասերից քաղաք մտան 20-րդ դիվիզիայի զորամասերը և Վրաստանի ապստամբների ջոկատը։ Վրացական ՍՍՌ Ռևկոմը ժամանեց Թիֆլիս։ Ժողովուրդը մեծ խանդավառությամբ ընդունեց նրան։

---

3 Լենին, Երկեր, հատ. 32, էջ 176։

1921 թ. փետրվարի 27-ին Թիֆլիսում Երևանյան (այժմ Լենինյան) հրապարակում կայացավ միտինգ, որտեղ ելույթ ունեցան Վրացական ՍՍՌ Ռևկոմի անդամներից 11-րդ կարմիր բանակի հրամանատար Ա. Գեկկերը և ուրիշ ընկերներ։

Այն ժամանակ, երբ Հայաստանում քաղաքացիական կռիվներ էին տեղի ունենում, հայկական կարմիր բանակի որոշ զարամասեր Վրաստանի մենշևիկյան կառավարության դեմ ապստամբած բանվորներին և աշխատավոր գյուղացիությանը եղբայրական օգնության ձեռք էին մեկնել։ «Հիշենք և այն, որ մեր բանակի մի մասը փետրվարին մասնակցում էր վրացական մենշևիկների կառավարության վերացման գործին»[1]։ 11-րդ կարմիր բանակի զորամասերը և Վրաստանի ապստամբած աշխատավորությունը մարտի 1-ին ազատագրեցին Գորի քաղաքը, մարտի 5-ին Խաշուրին։ Այն զոհերը, որ տվեց Հայկական կարմիր բանակը 11-րդ կարմիր բանակի շարքերում, Վրաստանի աշխատավորությանը ցույց տված մարտական օգնության ընթացքում, հիմք դրեց Անդրկովկասի աշխատավոր ժողովուրդների ինտերնացիոնալ համերաշխության ու խաղաղության հոյակապ շենքին։

Շուտով ջոկատը համալրվեց Լոռվա պարտիզանական ջոկատով, կազմակերպվեց 2-րդ գումարտակը։ Հատուկ ջոկատը վերանվանվեց 4-րդ հայկական Լոռու գունդ, որտեղ 2-րդ գումարտակի հրամանատար նշանակվեց Գ. Օզանեզովը։

Մարտերին մասնակցած նախկին դասակի հրամանատար,
այժմ պաշտոնաթող փոխ-գնդապետ Արամ Սահակյան.

---

1 Ա. Մ յ ա ս ն ի կ յ ա ն, Ընտիր երկեր, 1957, էջ 372։